

ԻՐԱՎՈՒՆՔԻ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ա.Ս. Սեղրակյան
իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ

Իրավունքը և անվտանգությունը փոխկապակցված և միմյանց փոխլրացնող սոցիալական երևույթներ են: Դրանք արժեքներ են, որոնց պահպանումն ու պաշտպանությունը յուրաքանչյուր անհատի, ողջ հասարակության և ընդհանրապես պետության առաջնային պարտավորություններից են: Յուրաքանչյուր անհատի ցանկությունն է ապրել և արարել անվտանգ պայմաններում, յուրաքանչյուր հասարակության ձգտումն է ստեղծել անհրաժեշտ պայմաններ, որտեղ անհատը հնարավորություն կունենա կատարելու իր ցանկությունը, իսկ յուրաքանչյուր պետության իրեն տվյալ հասարակության «պաշտոնական ներկայացուցչի»¹ նպատակն է պաշտպանել հասարակության ձգտումը (հատկանշական է, որ պետությունը հասարակական մտքի արդյունք է և այն կոչված է ներկայացնելու և պաշտպանելու ինչպես բոլոր անհատների (հասարակության), այնպես էլ յուրաքանչյուր անհատի շահերը): Ընդ որում, նշված ցանկությունը, ձգտումը և նպատակը, նաև ու հատկապես՝ այդ ցանկությանը, ձգտմանը և նպատակին հասնելը, ուղիղ համեմատական են անհատի, հասարակության ու պետության պահանջմունքներին և բխում են նրանց շահերից:

«Ցանկություն», «ձգտում», «նպատակ» բառերը նույնը չեն, սակայն այդ բառերը միշտ կապակցված են և փոխլրացնում են միմյանց: Այդ բառերը նաև ոչ միշտ են նույնական, բայց դրանք միշտ միանական են: Դրանք կիրառվում են կամ կարող են կիրառվել առանձին, սակայն տրամարանական կապով ենթադրվում ու փոխգործակցում են համակցության մեջ. չկա ձգտում առանց ցանկության և չկա նպատակ ու չի էլ կարող որևէ նպատակ իրագործվել առանց որոշակի ձգտման: Որքան միասնական ու փոխկապակցված են «ցանկությունը», «ձգտումը» և «նպատակը», նույնքան միասնական ու փոխկա-

¹ Марченко М.Н. Проблемы общей теории государства и права: учеб.: в 2 т. Т. 1. Государство. 2-е изд., перераб. и доп. - М.: Изд-во Проспект, 2008, с. 394.

Տես նաև Michael Glennon, *Constitutional Diplomacy: with a forward by J. William Fulbright*. Published by Princeton University Press, Princeton, New Jersey, 1991, p. 283.

պակցված են «անհատը», «հասարակությունը» և «պետությունը»: Դրանք մեկ միասնություն են՝ շղթա, որը չի կարող կապակցվել առանց մեկը մյուսի: Այդպիսին են նաև նրանց շահերը՝ որպես «օբյեկտիվ պահանջնությունների սուբյեկտիվ արտահայտման ձև»¹: Չկա պետություն և չկա պետական շահ առանց հասարակության ու հասարակական շահի, և չկա ու չի էլ կարող լինել հասարակություն ու հասարակական շահ առանց անհատի և անհատական շահի: Անհատը չի կարող իրականացնել իր ցանկությունը, եթե հասարակության մեջ չլինի համապատասխան պայմաններ (միջավայր) ստեղծելու ձգտումը, իսկ հասարակության որոշակի ձգտումն անօգուտ է, եթե պետությունը չընենա հաճապատասխան նպատակ: Այլ խոսքերով՝ պետության նպատակը պայմանավորված է հասարակության ձգտմամբ, իսկ հասարակության ձգտումը՝ անհատի ցանկությամբ: Եվ այդ վիճակը միշտ էլ առկա է, քանի որ «սնվում» է փոխադարձաբար կապակցված ու պայմանավորված պահանջնությունը (շահերով):

Իսկ ո՞րն է «անհատի շահ-հասարակության շահ-պետության շահ» միասնության կապն իրավունքի և անվտանգության հետ: Այս կապը պարզելու համար անհրաժեշտ է պատասխանել երեք կարևոր հարցերի:

1. Ի՞նչ է իրավունքը: Իրավունքի տեսության գիտության մեջ «իրավունք» հասկացության շուրջ ձևավորվել են բազմաթիվ մոտեցումներ, սակայն միասնական մոտեցում առ այսօր ձևավորված չէ: «Իրավաբանները դեռ սահմանումներ են փնտրում իրավունքի սեփական բնորոշման համար». կանոյան արտահայտությունը ստվերի պես «հետևում» է իրավագիտությանը, և այսօր՝ ավելի քան 200 տարի անց, այն դեռևս առկա է, թվում է առավել «հինչեղ»: Ամենայն հավանականությամբ այդ արտահայտությունն անփոփոխ և նույնքան «հինչեղ» կմնան ևս 200 տարի, ու տարեցտարի (հավանաբար անվերջ) մենք ականատես կլինենք իրավունքի նոր՝ բազմատեսակ և տարատեսակ, հիմնավորված կամ չիմնավորված սահմանումների (բնորոշումների):

Դժվար է պատկերացնել, որ կատնվի իրավունքի որևէ բնորոշում, որ չի արժանանա քննադատության: Այնուամենայնիվ, մենք կփորձենք ներկայացնել իրավունքի վերաբերյալ սեփական դիրքորոշումը,

¹ Стру Логунов А.Б. Региональная и национальная безопасность: Учебное пособие.-М.: Вузовский учебник, 2009, с. 9. Родачин В.М. Безопасность как социальное явление//Журнал "Право и безопасность", Номер - 4 (13) Декабрь 2004г., http://dpr.ru/pravo/pravo_10_5.htm (28.05.2012):

քանի որ խնդիրն ունի ոչ այնքան տեսական-գիտական, որքան գործ-նական-կիրառական նշանակություն (հատկապես՝ իրավաստեղծագործական, իրավակիրառական և իրավապահպանական տեսանկյուններից): Ցանկացած անհատի, հասարակության և ընդհանրապես յուրաքանչյուր պետության համար չափազանց կարևոր է իրավականի հստակեցումը, բոլոր առաջարկելի այն սահմանի ընդգծումը, որի շրջանակում անձինք (Ֆիզիկական, ոչ ֆիզիկական) պետք է գործեն ու հանագործակցեն: Այդ հստակեցումն է, որ անհատի համար կարող է երաշխավորել նրա անվտանգ, կայուն և իրավաչափ գոյատևումը (շահերի ապահովումը) տվյալ հասարակության մեջ, հասարակության համար կարող է երաշխավորել նրա անվտանգ զարգացումը (շահերի ապահովումը) տվյալ պետությունում, իսկ պետության համար կարող է երաշխավորել խաղաղ գոյատևումն ու զարգացումը (շահերի ապահովումը) միջազգային կարգում:

Իրավունքը բազմատար, բազմաշերտ և բազմանկյուն երևույթ է: Այն նաև, պրոֆեսոր Դ. Ստեփանյանի բնորոշմամբ, «բազմաչափ երևույթ է»¹, որի պատճառով «քաղաքակրթության ծագման և գոյության ժամանակից ի վեր մարդը փորձում է պարզել, թե ինչ է իրավունքը, որն է նրա բնվանդակությունը, եռթյունը, իմաստը, արժեքը և բազմաթիվ այլ հարցեր: Այդ հարցերին պատասխանելու համար ստեղծվել են բազմաթիվ կոնցեպցիաներ, ուսմունքներ, տեսակետներ: Այդպիսիք տարբերվում են միմյանցից, և այդ տարբերությունը պայմանանավորված է իրավաընթացքներում առանձնահատկություններով»²: «Իրավաընթացքը կամ «իրավահասկացողությունը» իրավունքի ընթացքն է, այսինքն՝ այն, թե ինչպես ենք մենք (այս կամ այն ժամանակահատվածում) ընթացնում իրավունքի իմաստը, ինչպես ենք հասկանում, ընկալում այն, նրա բնույթը»:

Գոյություն ունեն տարբեր մոտեցումներ, իրավաընթացքան տարբեր տիպեր: Որպես ընդհանուր կանոն՝ տարբերվում են իրար հակադրվող երկու խումբ տիպեր՝ իրավաբանական կամ յուրիստական (լատիներեն *jus*՝ «իրավունք» բառից) և լեզվական կամ օրենքական (լատի-

¹Ստեփանյան Դ.Ս. Իրավունքի տեսության հիմնահարցերը. Փենոմենոլոգիական մոտեցում.-Եր.: Միվա-Պրես, 2006, էջ 27 և 31:

²Նույնը:

Աերեն *lex, legis* «օրենք», բառից)¹: Առաջինի հիմքում դիտարկվում է բնական իրավունքը (*ius naturalism*), որը «սանվում» է բնությունից, այդ բվում մարդու բնությունից: Այն բնական է, բնական օրինաչափությունների արդյունք, և դուրս է արտաքին որևէ միջանությունից: Երկրորդի հիմքում դիտարկվում է պոզիտիվ իրավունք (*positivism*), որը «սանվում» է պետության կողմից: Այսինքն՝ դրա հիմքում պետության կամայականությունն է, նրա քնահաճույքը, կանքը, իսկ առավել կոնկրետ՝ իրավական նորմը, որը սահմանվել, գործի է դրվել արտաքին միջանության արդյունքում²: Կան նաև այլ տեսակետներ, որոնց համաձայն այդ տիպերն են՝ լեզվատականը, բնաիրավականը և լիբերտարը (կամ «ազատականը»)^{3,4}, մոնիստականը և պյուրալիստականը⁵, նորմատիվը (կամ նորմատիվիստականը) և անալիտիկը (կամ վերլուծա-

¹Վաղարշյան Ա. Պետության և իրավունքի տեսություն-2: Դասախոսություն: ԵՊՀ-Եր.: Դպրության հրատ., 2011, էջ 32. Проблемы общей теории права и государства: Учебник для вузов / Под общ. ред. академика РАН, д.ю.н., проф. В.С. Нерсесянца.—М.: Норма, 2006, сс. 136-137. McLeod Ian, Legal Theory: Fifth edition. Palgrave Macmillan Law Masters (Series editor: Marise Cremona). Palgrave Macmillan, printed and bound in Great Britain, 2010, p. 6:

² Այսունից էլ «պոզիտիվ իրավունք» կոչվում է նաև «դրական իրավունք» («դրական» ոչ թե «դրական-բացասական», այլ «դիր», «ոնել» («կանոն դնել սահմանել») հմաստով):

³ Ներսեսյանց Վ.Ս. Իրավունքի և պետության տեսություն.-Եր.: Նախի, 2001, էջ 30. Ներսեսյանց Վ.Ս. Փիլոսոփիա պարագագագությունների մասին. - Երևան: Ակադեմիական հրատարակություն, 2009, էջ 20: Յայլունի է նաև հետևյալ մոտեցունքը. այդ տիպերը երկուսն են՝ լեզվատական (կամ պոզիտիվիստական) և իրավաբանական (կամ հակա-լեզվատական), սակայն երկրորդն իր մեջ անպայմանորեն բռվանդակում է բնական-իրավական և լիբերտար-իրավաբանական ենթատիպերը (Ներսեսյանց Վ.Ս. Օպակա պարագագագությունների մասին. - Երևան: Ակադեմիական հրատարակություն, 2010, էջ 28, 33):

⁴ Լիբերտար-իրավաբանական տեսության հիմնադիր, հայազգի ակադեմիկոս Վ.Ս. Ներսեսյանցի խոսքերով՝ տեսությունն անվանվել է ոչ թե «լիբերալ» (կամ ազատական), այլ «լիբերտար» («ռուբերտար»), որպեսզի տարբերակի «ազատական» («ռուբերալ») ոչ միանշանակ ընդունված կամ «ոչ միշտ հանդի» բառից, իսկ «յուրիստական» («յուրիդիկա») բառի կիրառման նպատակն է այն տարբերակի «իրավական» («բնական իրավական», «պոզիտիվ իրավական») հասկացողությունից և շեշտը դնել լատիներեն *ius* («իրավունք» մաքուր, չդասակարգված առունու) բառի վրա: *Sens* Ծննդություն և անունություն: Դիալոգ Ա. Գործոնա և Վ. Ներսեսյան (վիդեօ). ՀՏՎ, 04.02.2003, http://crimpravo.ru/blog/philosophy_of_law/1328.html (28.05.2012).

⁵ Վենցեր Ա.Բ. Տեօրիա գումար և պարագագագությունների մասին. Տեօրիա գումար և պարագագագությունների մասին: Երևան: Ակադեմիական հրատարակություն, 2009, էջ 372.

կանք), որտեղ առաջինն էլ իր հերթին լինում է ինպերատիվ (հրամայական) և կրիտիկ (քննադատական)¹:

Ըստ այդմ՝ տեսական գրականության մեջ իրավունքի բնութագրման (սահմանման) առումով գոյություն ունեն տարրեր կարծիքներ: Մի դեպքում, իրավունքը «կամք է»², «համընդհանուր ազատություն» (կամ «ազատության ձև»)³, մյուս դեպքում, այն «նորմ է»⁴, «նորմերի ամրողություն»⁵ («նորմերի համակցություն»⁶) կամ «նորմերի համակարգ»⁷, մեկ այլ դեպքում իրավունքը «շահ է»⁸, «շահերի բաշխում»⁹ կամ «շահերի սահմանափակում»¹⁰: Այն նաև հանդես է գալիս որպես «բնական մեխանիզմ»¹¹, «սոցիալական ինստիտուտների համա-

¹ Stu Shapiro Scott J., *What is Law (And Why Should We Care)?* 1st Conference on Philosophy and Law: Neutrality and Theory of Law, Girona, 20th, 21st and 22nd of May 2010, pp. 4-6:

² Обсуждение доклада Лапаевой В.В. «Типы правопонимания в современной российской теории права» на Ученом Совете ИГП РАН, 09.12.2011, <http://www.igpran.ru/news/2936/> (28.05.2012).

³ Stu Нерсесянц В.С. Философия права: учебник. 2-е изд., перераб. и доп. - М.: Норма, 2009, с. 50, Владик Сумбатович Нерсесянц (составитель Лапаева В.В.)- Еր.: «Нжар», 2009 с. 7:

⁴ Kelsen Hans, *Pure Theory of Law*, Published in 1967 by The Regents of the University of California; reprinted by permission of the University of California Press (in *Readings in Jurisprudence and Legal Philosophy*), p. 518.

⁵ Вышинский А.Я. Вопросы теории государства и права.- М.: Гос. Изд-во юрид. лит. 1949, с. 4.

⁶ Վաղարշյան Ա. Պետության և իրավունքի տեսություն-2: Դասախոսություն: ԵՊՀ-Եր.: Գևորգյանի հրատ., 2011, էջ 24:

⁷ Алексеев С.С. Общая теория права: учеб., 2-е изд., перераб. и доп. – М.: Проспект, 2009, с. 79.

⁸ Храпанюк В.Н. Теория государства и права: Понятие и сущность права. Современное правопонимание, http://www.gumer.info/bibliotek_Buks/Pravo/Hrop/08.php (28.05.2012).

⁹ Венгеров А.Б. Теория государства и права: учеб. [для юрид. вузов]. 6-е изд., стер.-М.: Изд-во «Омега-Л», 2009, 367.

¹⁰ Лекции по общей теории права. Н.М. Коркунова. КНИГА 1: ПОНЯТИЕ ПРАВА.- СПб.: По изданию 1914г., с. 58, <http://allpravo.ru/library/doc108p0/instrum109/item260.html> (28.05.2012).

¹¹ Табарин И.В. Современная теория права: новый научный курс: Научная монография.-М.: Изд. Автора, 2008, с. 80.

կարգ»¹ կամ, պարզապես, «հասարակական իարաբերությունների կարգ»²:

Անեն դեպքում, եթե փորձենք համախմբել իրավունքի բնորոշման (կամ իրավաըմբռնման) գրեթե բոլոր, և առ այսօր հետազոտված, տեսությունները, ապա կտեսնենք, որ իրավական միտքը (հատկապես դասական արևմտյան իրավական միտքը, որը, ըստ Եության, ընկած է նաև հայ իրավական մոտքի հիմքում) իր տեսական զարգացման ընթացքում ձևավորել է իրավունքի ընթացման (կամ իրավունքի հասկացողության) երեք հիմնական տեսական-իրավական մոտեցումներ կամ տեսություններ՝: Ընդ որում, յուրաքանչյուր տեսության հիմքում մեկ հարց է՝ ո՞րն է իրավակազմավորման աղյուրը՝ ճարդու որպես անհատի բնությունը, հասարակությունը, թե՝ պետությունը: Այլ կերպ ասած, ըստ այդ մոտեցումների՝ իրավունքի բովանդակության հիմքում կամ անհատն է ու նրա բնությունը, կամ հասարակությունն է, կամ էլ պետությունը:

Դայտնի է, որ իրավաըմբռնումը չի կարող սահմանափակվել միայն իրավունքի բովանդակությամբ. իրավաըմբռնման համար, անշուշտ, կարևոր նշանակություն ունի նաև իրավունքի ձևը, որա դրսևորումները՝ իրավունքը, այս տեսանկյունից, արտահայտվում է երեք ձևով (այսինքն՝ ունի երեք դրսևորում)՝ իրավագիտակցություն, հասարակական իարաբերություն և իրավական նորմ, որը կարգավորում է այդ հասարակական իարաբերությունը⁴: Այստեղ, փաստորեն, իրավագիտակցությունը բնութագրական է անհատի հետ և անբաժան է նրա իրավագիտակցությունից, հասարակական իարաբերությունը կապակցված է հասարակության հետ, որտեղ ծագում, փոփոխվում և դադարում են տվյալ իարաբերությունները, իսկ իրավանորմը կարող է նույնակա-

¹Четверник В.А., Яковлев А.В. Институциональная теория права: НУЛ теоретических исследований права и государства ГУ-ВШЭ, 2009. Т. Научные исследования. № Выпуск 4, Аннотация, <http://teoria-prava.hse.ru/files/institution.pdf> (28.05.2012).

²Проблемы теории права и государства: Вопросы и ответы. Современное правопонимание: основные концепции, <http://www.bibliotekar.ru/teoria-gosudarstva-i-prava-4/62.htm> (28.05.2012).

³Սանդրաման տես՝ Поляков А.В. Общая теория права: Проблемы интерпретации в контексте коммуникативного подхода. СПб, 2004, с. 82:

⁴Տես՝ Լիвшաց Բ.Յ. Թեория права. Մ., 2001, с. 14 (հղումն ըստ Դ. Ստեփանյանի նշվ. աշխ., էջ 35):

նացվել պետության հետ, որի կողմից ճանաչման (ընդունման) և պաշտպանության հետևանքով այդ նորմը դառնում է պետության կամքը, ազգեցություն է գործում անհատի գիտակցության վրա և կարգավորում է համապատասխան հարաբերությունները¹:

Իրավագրունման վերը նկարագրված տեսությունների հիմնական ուղղությունների բնութագրական պատկերի հիման վրա կարելի է արձանագրել, որ իրավունքը զարգացող (դինամիկ) և բարդ (բազմատարր, բազմաշերտ, բազմանկյուն) երևույթ է, իսկ դրա բովանդակության մեջ՝ շերտերի արանքում և անկյուններում (կամ գուցեն դրանց հիմքում), անհատն է և նրա բնությունը, հասարակությունն է ու պետությունը: Եվ քանի որ անհատը, հասարակությունն ու պետությունը միասնական են, հետևաբար միասնական պետք է դիտարկվեն և բնութագրվեն իրավունքի բոլոր շերտերը, բոլոր անկյունները (որոնց հիմքում, փաստորեն, անհատական տարրն է, հասարակական տարրը, պետական տարրը): Այս առումով, գտնում ենք, որ իրավունքը սոցիալական այնպիսի երևույթ է, որի լիարժեք և անրողական ընկալման համար անհրաժեշտ է այն դիտարկել (և ըմբռնել, հասկանալ) ոչ թե նրա շերտերի հիմքում գտնվող անհատի ու նրա բնության (անհատական տարրի), հասարակության (հասարակական տարրի) և պետության (պետական տարրի) տարանջատվածության անկյունից (ինչպես արվել է քննարկված երեք ուղղությունների կողմից), այլ՝ անրողականության հարբության վրա՝ անհատին, հասարակությանը և պետութ-

¹Նույն պատկերը կտեսնենք. Եթե միավորենք իրավունքի ուսմունքները (դպրոցները): Ըստ ծագման՝ այդ ուսմունքները նորից երեքն են՝ բնական-իրավական, սոցիոլոգիական և էտաստիտական: Առաջին ուսմունքի համաձայն իրավունքի ծագման հիմքում ընկած է բնությունը, այդ բնույթ (ու հասկապես) անհատի բնությունը: Երկրորդ ուսմունքի համաձայն՝ իրավունքի ծագման հիմքում ընկած է հասարակությունը: Իսկ երրորդի համաձայն՝ հիմքում պետությունն է: Իրավաբանական գրականության մեջ առանձնացվում է նաև իրավունքի հոգեբանական ուսմունքը (Поляков А.В. Общая теория права: Проблемы интерпретации в контексте коммуникативного подхода. СПб., 2004, с. 195, Խաչատրյան Ս.Ս. “Պետության և իրավունքի տեսություն. հարցեր և պատասխաններ (2-րդ բարեկիոնված իրատարակություն).-Եր.: «Կախսա» հրատ., 2012, էջ 66, և այլն): Կերպինս, սակայն, հիմնավորված չի բնույթ, հատկապես, որ դրա ծագման հիմքում դիտվում է մարդու (անհատի) հոգեկան աշխարհը: Անհատի հոգեկան աշխարհը նրա բնության անբաժան մասն է, հետևաբար իրավունքի հոգեբանական ուսմունքը, կարծում ենք, ածանցված է իրավունքի բնական-իրավական ուսմունքից և չի կարող կազմել ինքնուրույն դպրոց:

յանն ընդունելով որպես առանձին, բայց միաժամանակ ոչ առանձնացված միասնություն:

2. Ի՞նչ է անվտանգությունը: Դիմ հոռմեացի Կիկերոնի գնահատմամբ՝ կենդանի բոլոր էակները բնության կողմից օժտված են այնպիսի մի շնորհքով, որով նրանք ծգտում են պաշտպանվել, զերծ մնալ այն անենից, ինչը վնասակար է, վտանգավոր: Բոլոր էակներն եւ ցանկանում են համախմբվել և սերունդ թողնել, սակայն, ի տարբերություն կենդանի մյուս էակների՝ մարդը՝ իբրև բանական էակ, անտարբեր չէ այն ժամանակի նկատմամբ, որում ինքն ապրում է: Նա փորձում է հասկանալ ներկան և այն համադրելով անցյալի հետ կանխորոշել ապագան՝ այն ժամանակը և միջավայրը, որտեղ ապրելու է¹: Այս առունով, մարդու համար առավելապես հետաքրքրական են նաև մյուս մարդիկ (նրանց ցանկությունները, ծգումները, նպատակները կամ շահերը), որոնց հետ նա պետք է համախմբվի, համագործակցի կամ ազդեցություն գործի նրանց վրա ու կառուցի այնպիսի միջավայր, որտեղ վտանգը բացակայում է:

Վտանգի հակառակ կամ փիլիսոփայական տեսանկյունից՝ համարաբերական, կատենգորիան անվտանգությունն է: Արդի հայերենում «անվտանգություն» բառը բացատրվում է որպես «անվտանգ լինելը», այսինքն՝ «ոչ վտանգավոր, վտանգ չպարունակող, վտանգից զերծ, ապահով» վիճակում գտնվելը (լինելը)²: Ուստեղնում այդ բառը (безопасность) նշանակում է «վտանգի բացակայություն» (Ч. Պալ) կամ «վիճակ, երբ որևէ նեկին վտանգ չի սպառնում» (Ս. Օժեգով)³:

¹Տես՝ Цицерон Մարկ Տուլլիй, Об обязанностях. [октябрь–декабрь 44г. до н.э.], IV (11). Философские трактаты, <http://ancientrome.ru/antlitr/cicero/phili/officiis1.htm> (28.05.2012):

²Աղյան Է. Բ. Արդի հայերենի բացատրական բառարան: Ա-Չ (Պարունակում է 135600 բառ և 11000 դարձվածքանական միավոր).-Եր.: «Հայաստան» հրատ., 1976, էջ 81:

³Անվտանգություն՝ հասկացության, իմաստի տեսական իիմքերի մասին տես նաև Տեր-Ակոսով Ա.Ա. Безопасность человека (теоретические основы социально-правовой концепции). М.: Изд-во МНЭПУ, 1998, сс. 9-19, Սեղրակյան Ա.Ս. Զինվորական հանցագործությունները՝ որպես ռազմական անվտանգության դեմ ուղղված հանցագործություններ. քրեաֆրազական և քրեարանական հետազոտություն.-Եր.: ՀՀ ԳԱԱ «Գիտություն» իրատ., 2010, էջ 35, 36, 62-65:

³Տես՝ Դալъ В.И. Толковый словарь живого великорусского языка: В 4 т. / Под ред. проф. И.А. Бодуэна де Куртене.-М.: Цитадель, 1998, Т. I, с. 107, Ожегов С.И. Словарь русского языка: В 4 т., 2-е изд.-М.: Русский язык, 1981, Т. I, с. 74:

Անգլերենում այն (*security*) բնորոշվում է որպես՝ «վտանգից կամ վնասից զերծ լինելու վիճակ»¹:

Ինչպես նկատում ենք, անվտանգությունը նույնպես բարդ երևոյթ է, և նրա բոլոր անկյուններում, շերտերում կամ հարթություններում բացառված է վտանգը, իսկ համապատասխան սուբյեկտների շահերն ել պաշտպանված են: Դիմնավորված է թվում այն տեսակետը, որ անվտանգությունն ունի նաև զարգացող (դիմանմիկ) բնույթ²:

Եթե ընդհանրացնենք, ապա կտեսնենք, որ անվտանգությունը սուբյեկտի այն վիճակն է (դիմանմիկ վիճակը), երբ այս կամ այն գործոնն այլևս բացասաբար չի ազդում նրա գոյատևման վրա. վիճակ, «երբ պաշտպանական մերոդների և մեխանիզմների ապահովումը հնարավորություն է տալիս հաջողությանը դիմակայել անձի, հասարակության և պետության (ընդգծումը մերն է Ա.Ս.) շահերին ուղղված ցանկացած ուժնագությանը»³:

Անվտանգության օբյեկտը, այսինքն՝ այն արժեքը, որը չպաշտպանելու պայմաններում առկա է վտանգը՝ անհատն է (նրա իրավունքներն ու ազատությունները), հասարակությունը (դրանում առկա նյութական և հոգևոր արժեքները) և պետությունը (անկախությունը, սահմանադրական կարգը և այլն): Անվտանգության ապահովումը բխում է երեքի (անհատի, հասարակության, պետության) պահանջմանը և ներից, հետևաբար երեքն էլ միաժամանակ (և առանձին վերցրած) ծգտում են անվտանգության: Ու քանի որ երեքն էլ ծգտում են անվտանգության, ուստի երեքն էլ ցանկանում են ապահովել այդ վիճակը՝ դրանով իսկ անվտանգության օբյեկտից միաժամանակ վերածվելով անվտանգության սուբյեկտի:

¹Oxford Dictionaries: the worlds most trusted dictionaries, <http://oxforddictionaries.com/definition/security> (28.05.2012).

²Նման տեսակետ է արտահայտում Ազգային և միջազգային անվտանգության հիմնարարի (ՈՂ) նախագահի Լ. Շերշնևը (տես Շերշնև Լ.Ի. Օ роли общественной системы безопасности//Современные проблемы национально-государственной и международной безопасности: Сб. материалов конф.-М.: 1992, с. 94 (հղում քաղաքացի Ա.Բ. Բերգունով և Ա. Վ. Մանուկյան կողմէ):

³Перечень терминов, используемых в нормативных правовых актах союзного государства в области обороны, военной службы и социальной защиты военнослужащих (от МО РБ и МО РФ), с. 3//«Военное право» ЭПИ, выпуск 3, 2004г.

3. Ինչպիսի՞ն է իրավունքի և անվտանգության հարաբերակցությունը: Իրավունքի և անվտանգության հարաբերակցությունը սերտ է և բազմաշփում, քանի որ և իրավունքը, և անվտանգությունը նախատեսված են երեք սուբյեկտների համար:

Այսպես, անհատը, հասարակությունը և պետությունը միասնական են, ինչու արարար իրավունքի ամբողջական ընկալման համար, ինչպես արդեն նշվեց, անհրաժեշտ է իրավունքը դիտարկել ոչ այնքան անհատական, հասարակական կամ պետական տարրերի տարանջատվածության անկյունից, որքան միասնականության մեջ՝ ամբողջականության հարբության վրա: Ասկածով առաջարկ չի արվում համախմբել իրավամբունան երեք հիմնական տիպերի կամ իրավունքի երեք հիմնական դպրոցների դրական արդյունքները: Նման զաղափարներն ի կատար ածելու բոլոր քայլերը եղել են և, ամենայն հավանականությամբ, կմնան «անպտուղ փորձեր»¹: Ասվածը, պարզապես, նշանակում է, որ իրավունքը, լինելով սոցիալական քարդ երևույթ և զարգանալով տարբեր հարբություններում (շերտերում), տարբեր անկյուններում, վերոնշյալ տարրերը պարունակում է միասնականության մեջ՝ առանց մեկը մյուսից առանձնացնելու, վերադասելու կամ ենթադասելու: Իրավունքն առկա է և միշտ պետք է առկա լինի անհատական տարրի, հասարակական տարրի և պետական տարրի առկայությամբ, քանի որ այն հարկավոր է միայն երեք սուբյեկտի՝ անհատին, հասարակությանը և պետությանը, ընդ որում ինչպես յուրաքանչյուրին առանձին վերցրած, այնպես էլ երեքին միասնության մեջ: Նույնը վերաբերում է նաև անվտանգությանը՝ որպես մի վիճակ, որի առկայության պայմաններում է միայն հնարավոր անհատի, հասարակության և պետության զարգացումը (շահերի պաշտպանվածությունը): Այս առումով, անվտանգությունը, այնպես ինչպես իրավունքը, հարկավոր է նույն երեք սուբյեկտներին՝ անհատին, հասարակությանը և պետությանը. դրա բացակայությունը հակադիր է երեքի պահանջմունքներին (շահերին):

Նման նույնեցումը ոչ այլ ինչ է, եթե ոչ առկա իրականությունից քիչող անհրաժեշտություն: Լավ է, թե վատ, բայց իրականությունն այնպիսին է, որ ազատությունն այսօր առավել քան երեսն պայմանավորված է անվտանգությամբ, իսկ անվտանգությունը՝ ազատությամբ, քանի որ նոր՝ անցումային ժամանակաշրջանում ազատությունը վտանգ-

¹Տե՛ս՝ Նույն տեղում, էջ 48-59:

ված է ժամանակակից՝ հաճախ միմյանցով պայմանավորված մարտահրավերներով:

Վերը նշված մոտեցման համատեքստում, որը կարելի է պայմանականորեն անվանենք սեկուրիտար մոտեցում (լատիներեն *securitas*՝ «անվտանգություն», բառից՝ գտնում ենք, որ իրավունքը մեծապես փոխկապակցված է անվտանգության հետ, քանի որ իրավունքը պայմանավորված է անվտանգության անհրաժեշտությամբ, իսկ անվտանգությունը՝ իրավունքի ուժով: Ավելին, իրավունքը և անվտանգությունը ոչ միայն սերտորեն փոխկապակցված են, այլև նույնական են: Որանք երկուսն էլ՝ ա) սոցիալական երևույթներ են, բ) բարդ են իրենց բովանդակությամբ՝ բազմատարր են, բազմաշերտ ու բազմանկյուն, գ) անընդհատ զարգացող են և կրում են ոյինամիկ բնույթ, դ) պաշտպանում են անհատի, հասարակության և պետության շահերը. ե) երաշխավորում են անհատի, հասարակության և պետության զարգացումը (ընդորում եթե անվտանգությունն ապահովում է զարգացումը, ապա իրավունքը կարգավորում է այդ զարգացումը):

Այս առումով, իրավունքի և անվտանգության՝ որպես փոխկապակցված երևույթների հարաբերակցությունը ոչ միայն բազմաշփում է, սերտ է և նույնական, այլ նաև ամուր է: Ինչպես իրավունքը, այնպես էլ անվտանգությունը ծառայում են միևնույն սուբյեկտների (անհատի, հասարակության, պետության) շահերին և բխում են հենց այդ սուբյեկտների շահերից:

Անփոփելով ասվածը՝ կարելի է արձանագրել, որ «անհատի շահի հասարակության շահ-պետության շահ» եռամիասնության կապը «իրավունք-անվտանգություն» երկմիասնության հետ ուղղակի է, և այդ կապի ամրությունն էլ կարող է երաշխավորել անհատի, հասարակության ու պետության զարգացումը: